

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ  
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՂԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Փետրուար 16, 2020

SUNDAY, February 16, 2020

9215 SE Church St., Clackamas, OR 97015





## ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Յովհաննէս 7:37-52

**Մ**եծ տօնի վերջին օրը Յիսուս կանգնած էր եւ աղաղակում էր՝ ասելով. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ եւ խմի: Ով ինձ հաւատում է, - ինչպէս Գիրքն է ասում, - նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հաւատացողները. Քանի որ Հոգին դեռ եւս չկար, որովհետեւ Յիսուս դեռ փառաւորուած չէր:

Ժողովրդից ոմանք, երբ լսում էին այս խօսքերը, ասում էին՝ սա՛ է ճշմարիտ մարգարէն. Ուրիշներն ասում էին՝ սա՛ է Քրիստոսը. Իսկ դեռ ուրիշներ ասում էին՝ միթէ Քրիստոս Գալիլիայի՞ց է գալու. չէ՞ որ Գիրքն ասում է, թէ Քրիստոս գալու է Դաւթի սերնդից եւ Բեթղեհէմ գիւղից, որտեղից Դաւիթն էր: Եւ ժողովրդի մէջ նրա պատճառով պառակտում տղաւ: Եւ նրանցից ոմանք ուզեցին բռնել նրան՝ բայց ոչ ոք նրա վրայ ձեռք չդրեց: Իսկ սպասաւորները վերադարձան քահանայապետների եւ փարիսեցիների մօտ. եւ սրանք նրանց ասացին.

«Ինչո՞ւ նրան այստեղ չբերեցիր»:

Սպասաւորները պատասխանեցին ու ասացին.

«Ոչ մի մարդ երբեք այնպէս չի խօսել, ինչպէս այն մարդը»: Փարիսեցիները ասացին. «Միթէ դո՞ւք էլ եք մոլորուել: Միթէ իշխանաւորներից կամ փարիսեցիներից որեւէ մէկը հաւատա՞ց նրան, բացի այն խաժամուժ ամբոխից, որ օրէնք չգիտէ եւ նգովեալ է»:

Նիկողեմոսը, որ նախապէս գիշերով եկել էր նրա մօտ եւ նրանցից մէկն էր, նրանց ասաց. «Միթէ մեր օրէնքը դատապարտո՞ւմ է մարդուն, եթէ նախ նրանից լսած եւ կամ իմացած չլինի, թէ ինչ է գործել նա»: Նրան պատասխանեցին ու ասացին. «Միթէ դո՞ւ էլ Գալիլիայից ես. քննի՛ր ու տե՛ս, որ Գալիլիայից մարգարէ դուրս չի գալիս»:

John 7:37

Let anyone  
who is thirsty  
come to me  
and drink.

-Jesus






## GOSPEL READING

John 7:37-52

**O**n the last day, that great *day* of the feast, Jesus stood and cried out, saying, "If anyone thirsts, let him come to Me and drink. He who believes in Me, as the Scripture has said, out of his heart will flow rivers of living water." But this He spoke concerning the Spirit, whom those believing in Him would receive; for the Holy Spirit was not yet *given*, because Jesus was not yet glorified.

Therefore many from the crowd, when they heard this saying, said, "Truly this is the Prophet." Others said, "This is the Christ."

But some said, "Will the Christ come out of Galilee? Has not the Scripture said that the Christ comes from the seed of David and from the town of Bethlehem, where David was?" So there was a division among the people because of Him. Now some of them wanted to take Him, but no one laid hands on Him.




Then the officers came to the chief priests and Pharisees, who said to them, "Why have you not brought Him?"

The officers answered, "No man ever spoke like this Man!"

Then the Pharisees answered them, "Are you also deceived? Have any of the rulers or the Pharisees believed in Him? But this crowd that does not know the law is accursed."

Nicodemus (he who came to Jesus by night, being one of them) said to them, "Does our law judge a man before it hears him and knows what he is doing?"

They answered and said to him, "Are you also from Galilee? Search and look, for no prophet has arisen out of Galilee."



# ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տէրտէրեան



Տէ՛ր իմ Աստուած,  
Բարի լոյսը Քեզմէ  
Ինձի կուգայ այս առաւօտ:  
Միրտս կը բանամ Քեզի  
Եւ Քու օրհնութեամբ  
Քայլերս կ'առաջնորդեն դէպի դպրոց,

Որպէսզի լուսաւորեն միտքս ու հոգիս  
Ու դառնամ տիպար աշակերտ, ազնիւ մարդ:  
Օրհնէ՛ ինձ ամէն վայրկեան,  
Ու ես կը խոստանամ  
Բարի կեանք ապրիլ  
Քու փառքին համար: Ամէն:

# PRAYER

By Archbishop Hovnan Derderian



The Lord of Goodness is willing when the soul is willing to walk in God's path. Your will is Holy, my Lord, God. The power of your love is in you will. The will of God is beyond the understanding of people. The Gospel is the holy book that explains your will, the gate of life that takes you to the new life and lifts you up.

Father of all, you sent your Only Begotten Son from heaven to earth; he became the golden bridge to heaven for people; my soul calls upon you in the peace of the night. I hear your sweet voice, the voice of new life, which is lived only in a creative life woven with the treads of faith.



## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՄԷ ՀԵՌԱՆԱԼԸ՝ ԴԺԲԱԽՏԱՆԱԼ Է

Շատեն այն պատճառները որոնք կրնան մեզ դժբախտության առաջնորդել: Այս յօդուածով պիտի յիշեն անոնցմէ միմիայն, որ է՝ Աստուծմէ հեռանալը: Կան մարդիկ որոնք կը կարծեն որ Աստուծոյ հետեւիլը զիրենք դժբախտության կ'առաջնորդէ, Սուրբ Գիրքը սակայն ասոր հակառակը կ'ուսուցանէ: Երբ Աստուած տեսաւ որ Իսրայէլացիները զինք լքելով սկսան վստահիլ Եգիպտացիներուն եւ Ասորեստանցիներուն, այն ատեն թոյլ տուաւ որ անոնք տեսակ-տեսակ նեղութիւններու հանդիպին, եւ երբ անոնք աղաղակեցին Տիրոջ, Տէրը անոնց ըսաւ. «Չէ՞ որ ասիկա դուն քու վրադ բերիր քու Տէր Աստուածդ ձգելով, երբ անիկա ճամբուն մէջ քեզի առաջնորդութիւն կ'ընէր» (Եր 2.17):


Աստուծմէ հեռացողը որեւէ ձեւով չի՛ կրնար գերծ մնալ փորձանքներէ: «Քանի որ դուք զիս թողուցիք եւ ալ ձեզ սուրի պիտի մատնեմ» կ'ըսէ Աստուած (Ես 65.11-12): Մարդիկ ստեղծուած են Աստուծո՛յ հետ եւ Աստուծո՛յ համար ապրելու նպատակով: Աստուած ծալապատիկ պիտի չնստի երբ մարդիկ շեղին աստուածադիր նպատակէն: Ասոր ապացոյցը կը տեսնենք Ադամին եւ Եւային կեանքին մէջ: Աստուած կ'ուզէր որ Ադամն ու Եւան մնայուն կերպով իր ներկայութեան մէջ ապրէին: Երբ անոնք մեղանչեցին եւ հեռացան Աստուծոյ ներկայութենէն, Աստուած լուռ չկեցաւ, այլ՝ զիրենք փնտռելու ելաւ, որովհետեւ անոնք շեղեցան այն նպատակէն որուն համար Աստուած զիրենք ստեղծած էր:

Հոսկէ կը սորվինք այն, որ Աստուած բոլորովին լուռ եւ անտարբեր պիտի չկենայ երբ մարդիկ հեռանան իրմէ:

Ան կրնայ լուրջ նեղութիւններու մատնել զանոնք, նպատակ ունենալով զիրենք իրե՛ն վերադարձնել: Աստուծմէ հեռացող մարդը վստահաբար չ՛ակնկալէր որ Աստուած օրհնէ զինք եւ հեռու պահէ ամէն տեսակի փորձութիւններէ:

Աստուածաշունչին մէջ յիշուած Իսրայէլի կրած նեղութիւններուն իննսունհինգ տոկոսը, անոնց Աստուծմէ հեռանալուն եւ ուրիշ աստուածներ պաշտելուն պատճառով էր: Մովսէս Իսրայէլի ժողովուրդին վերաբերեալ կ՛ըսէ. «Գացին ուրիշ աստուածներու ծառայեցին ու երկրպագեցին այնպիսի աստուածներու, որոնք Տէրը որոշած չէր անոնց» (Բ.Օր 29.26): Ի՞նչ կը նշանակէ. «Տէրը որոշած չէր անոնց»: Կը նշանակէ, որ Աստուծոյ ծրագիրին մաս չէր կազմեր որ Հրեաներ օտար աստուածներ պաշտէին: Հոսկէ կը ստրվինք այն, որ ամէն անգամ երբ փորձանքի հանդիպինք, պէտք չէ յաւակնինք մտածելու որ Աստուած ի՛նքն է մեզ ասոր առաջնորդողը:

Սիրելի՛ ընթերցող, դուն ի՞նչ կը պաշտես: Քեզ շինող Աստուածը, թէ՛ քու շինած մէկ աստուածդ՝ դրամը, դիրքը, փառքը, եւայլն: Երբ նեղութեան մէջ իյնաս, որո՞ւն օգնութեան պիտի կանչես եթէ Աստուծմէ հեռու մէկն ես: Հետեւաբար, «գիտցի՛ր ու տե՛ս թէ գէշ ու դառն բան մըն է, որ քու Տէր Աստուածդ կը թողուս» (Եր 2.19):



## Ի՞նչ է Տեսարնդատաջը

Քառասնորեայ Յիսուսի տաճար տանելու օրուան յիշատակն է: Մովսէսի օրէնքի համաձայն, Յովսէփ եւ Մարիամ քառասնորեայ Յիսուսին տաճար տարին՝ Տիրոջ առջեւ հանելու (Տեսոն ընդ առաջ): Հրեաներու մօտ, սովորութիւն էր, որ արու ունեցող մայրերը նախ եօթը օր կը սպասէին իբրեւ անմաքուր, ութերորդ օր թլփատէին տղուն եւ երեսուն երկու օր եւս կը սպասէին: Այնուհետեւ յաջորդ քառասուներորդ օրը, արու զաւակին պիտի տանէին տաճար՝ Տիրոջ առջեւ ընծայելու համար:

Տեսարնդատաջը կը զուգադիպի Փետրուար ամսուն 14-ին (Յունուար 6+40 օր) եւ անշարժ է: Որպէս Տէրունական տօն՝ Փետրուար 13-ի երեկոյեան կը կատարուի նախատօնակ, որուն ընթացքին հաւատացեալները իրենց մոմերը կը վառեն եկեղեցոյ սեղանի մոմէն եւ կը տանին տուն:

## Ի՞նչու համար մոմերը վառած տուն կը տանին:

Վառած մոմը կը խորհրդանշէ Քրիստոսի որպէս աշխատի լոյսը:

Հաւատացեալը, իր ընտանիքը այդ լոյսով լուսաւորուելու միտումով մոմերը վառած տուն կը տանի:

Իսկ կրակը, որ կը վառեն եկեղեցոյ բակը, ցոյց կու տայ մեր հին եւ նոր կեանքը: Ժամանակին կը ծառայէինք նիւթին (կրակին)՝ որ ամէն ինչ կ'այրէր եւ կ'ոչնչանար աննպատակ եւ անիմաստ: Որքա՞ն նման գործեր ըրած ենք ժամանակ վատնելով:

Այդ մարդուն կեանքը առանց Քրիստոսի է: Հիմա կը ծառայենք իսկական, Կենդանի Կրակին, Լոյսին (եկեղեցիին):

## Հարցում Պատասխան Բաժին

### Ս. Ծնունդին ինչպե՞ս են իրար ողջունում:

Ողջուն տվողն ասում է.

-Քրիստոս ծնավ եւ Հայտնեցավ:

Ողջուն ստացողը պատասխանում է.

-Օրինյալ է հայտնութիւնը Քրիստոսի:

### Ս. Զատիկին ինչպե՞ս են իրար Ողջունում:

Ողջուն տվողն ասում է.

-Քրիստոս հարյաւ ի մեռելոց:

Ողջուն ստացողը պատասխանում է.

-Օրինյալ է հարութիւնն Քրիստոսի:

### Ս. Պատարագի ժամանակ ինչպե՞ս են իրար Ողջունում:

Ողջուն տվողն ասում է.

-Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ:

Ողջուն ստացողը պատասխանում է.

-Օրինյալ է հայտնութիւնը Քրիստոսի:

### Մասի բաժանման ժամանակ ի՞նչ են ասում:

Մաս բաշխողը ասում է.

-Մաս եւ բաժին եղիցի Սուրբ պատարագիս:

-Մաս ստացողը պատասխանում է.

-Բաժին իմ Աստուած հավիտյան:

### Ս. Հաղորդություն ստանալու ժամանակ ի՞նչ են ասում:

Հավատացեալն ասում է .

-Մեղայ Աստուծո:

Քահանան պատասխանում է.

-Սա եղիցի քեզ քաւություն եւ թողություն մեղաց քոց:

## Benefits of Struggling

A man found a cocoon of a butterfly. One day a small opening appeared, he sat and watched the butterfly for several hours as it struggled to force its body through that little hole.

Then it seemed to stop making any progress. It appeared as if it had gotten as far as it could and it could go no farther. Then the man decided to help the butterfly, so he took a pair of scissors and snipped off the remaining bit of the cocoon. The butterfly then emerged easily.

But it had a swollen body and small, shriveled wings. The man continued to watch the butterfly because he expected that, at any moment, the wings would enlarge and expand to be able to support the body, which would contract in time.

Neither happened!

In fact, the butterfly spent the rest of its life crawling around with a swollen body and shriveled wings.

It never was able to fly.

What the man in his kindness and haste did not understand was that the restricting cocoon and the struggle required for the butterfly to get through the tiny opening were God's way of forcing fluid from the body of the butterfly into its wings so that it would be ready for flight once it achieved its freedom from the cocoon.

Sometimes struggles are exactly what we need in our life. If God allowed us to go through our life without any obstacles, it would cripple us. We would not be as strong as what we could have been.



## HOME BLESSING

**T**he home is a sacred place where family members maintain and share many values. It is also a place where they are charged and empowered with these values to live a peaceful and God-pleasing life. It is under this roof that all collectively form oneness in spirit and assume an important responsibility in the life of the community. It is in this place where they break bread and share joys and sorrows. Here the presence of the Omnipotent is felt since every family is a miniature of a "Little Church—Ecclesia." In this "Little Church" the inexhaustible love and the very generous blessing of God permeate.


For Home Blessing the priest takes with him wafer and incense, and blesses the bread, the water and the salt provided by the family. These three fundamental elements are essential life-giving gifts for human life. The priest asks from the Omnipotent God not to lessen these three gifts without which life becomes impossible or imperfect.

The bread, the water and the salt are symbols of God's infinite goodness and care. With the blessing of these great gifts the household is enriched spiritually and its existence perpetuated for the service of his Creator. Along with the bread, salt, and bread offered on a tray by the dwellers, the priest places also the wafer stamped with a crucifix and designs of grapes and wheat. The wafer is the presence of Christ in the home. The members of the family can either distribute the wafer among themselves or keep it in a jar along with flour, salt, or rice.

During Home Blessing it is customary to burn incense which symbolizes the burning of our souls with our Lord's love. In his supplication the Psalmist says, "Let my prayer be counted as incense before Thee." Through this ceremony everyone's faith is replenished and strengthened and the Lord's presence is felt.

FOR HOME BLESSING, PLEASE CALL  
FR.MASHDOTS KESHISHIAN AT (818) 293-9098.

# SAINT KEVORK ARMENIAN CHURCH



**Cordially Invites our Parishioners to Celebrate  
Feast of Presentation of our Lord to the Temple  
(DYARENTARACH)**

**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻ ԽԱՐՈՅԿԱՀԱՆԴԵՍ**

**Sunday, February 16 2020 at 1.00PM  
Կիրակի, Փետրուար 16 2020 ժամը 1.00-ին**

**On the occasion we would also like to invite our newlyweds and all married couples to join this special service and to receive blessings.**

**Միքով կը հրաւիրենք համայնքիս պսակուած բոլոր զոյգերուն եւ նոր ծնուած երեխաներուն ստանալու համար օրուան օրհնութիւնը:**

**Following the service, traditional Bonfire will be lit.  
Օրհնութեան արարողութենէն ետք տեղի պիտի ունենայ  
աւանդական խարոյկահանդէսը:**



## LENT CELEBRATION.

Sunday, March 1st at 11a.m.

Dear parishioners, we invite you to join us in observing Good Lent. Let us return to God in those areas where we have strayed. Let us turn to him in prayer and renew holy habits. Let us read and meditate on the Scriptures.

Let us gather together to encourage one another to love and good deeds.

The Holy Badarak service will be followed by vegan luncheon provided by Ladies Society of St. Kevork Armenian church:

Tickets: Adults \$12.00, Children 5-12 \$7.00, Children under 5 free.

## Միջինքի տոնակատարություն

Կիրակի մարտի 1 ժամը 11-ին:

Հարգելի հավատացյալներ հրավիրում ենք Ձեզ միասին նշելու միջինքի տոնը: Եկեք Աստուծուն

վերադառնանք այն վայրերում, որտեղ մենք շեղվեցինք: Եկեք դիմենք նրան աղոթքով եվ թարմացնենք սուրբ սովորությունները: Եկեք միասին հավաքվենք, որպեսզի խրախուսենք մեկս մյուսին և քաջալերենք միմյանց: Անմիջապես պատարագից հետո կլինի բուսական մթերքներով տիկնանց միության անդամների կողմից պատրաստված ճաշ

Տոմսերի ամօթքն է

Մեծեր \$12.00

Երեխաներ \$7.00

5 տարեկանից ցածր երեխաները անվճար